



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

<< ----->> << ----->> 2021թ.

N -----

**Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ հասարակական
կազմակերպության նախագահ
պարոն Արթուր Սաքունցին
էլ. հասցե info@hcav.am**

Հարգելի պարոն Սաքունց

Ի պատասխան Ձեր 28 դեկտեմբերի 2020թվականի ՌԵ/2020-28.12/721 գրության ներկայացնում ենք Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի «Ծերացման հետևանքների հաղթահարման և տարեցների սոցիալական պաշտպանության ռազմավարությանը և ռազմավարության իրականացման 2017-2021 թվականների միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» N 20 արձանագրային որոշմամբ հաստատված միջոցառումների իրականացման վերաբերյալ տեղեկատվություն.

Կետ 5. Մինչ օրս տարեցներին տրամադրվող բոլոր սոցիալական ծառայություններն ուղղված են եղել միայնակ կենսաթոշակառուներին, բայց բազմանդամ ընտանիքներում ապրող տարեցների խնդիրները կարծես անտեսվել են: Այս խնդրի լուծումը մասամբ անկալվում էր ստանալ համալիր սոցիալական ծառայությունների ներդրման արդյունքում, որով նախատեսվում է սոցիալական դեպք վարողի կողմից ընտանիքի սոցիալական կարիքների բազմակողմանի և համալիր գնահատում և ըստ դրա ընտանիքի ընդգրկում պետական կամ համայնքային ծրագրերում: Այս պահի դրությամբ մարզպետարանը ֆինանսապես աջակցում է այն տարեցների ընտանիքներին, որոնք իրենց ընտանիքի անդամ հանդիսացող տարեցների երկարատև հիվանդության, բուժման կամ կոմունալ-կենցաղային պայմանների բարելավման խնդիրներով դիմում են ներկայացնում մարզպետարան:

Մարզպետարան դիմած տարեց քաղաքացիների դիմումների կապակցությամբ մարզում գործող Արմավիրի և Բաղրամյանի ինտեգրված սոցիալական ծառայությունների, Վաղարշապատի ՍԱՏԳ-ի մասնագետների կողմից կատարվում են տնային այցելություններ, ուսումնասիրվում նրանց ընտանիքների կենցաղային, սոցիալական վիճակը, գնահատվում կարիքները և ըստ դրա կազմվում է եզրակացություն, որի հիմքով մարզպետի որոշմամբ մարզպետարանի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման << Այլ նպաստներ բյուջեից>> հոդվածով նախատեսված ծախսերից նրանց ընտանիքներին տրամադրվում է դրամական օգնություն:

Անհրաժեշտության դեպքում համայնքների ղեկավարներին նույնպես առաջարկվում է լրացուցիչ օժանդակության տրամադրել իրենց համայնքների կարիքավոր տարեցների:

ՀՀ Արմավիրի մարզպետարանի և համայնքապետարանների կողմից 2017-2020թթ.-ին առնվազն 2760 տարեց ստացել է համապատասխան աջակցություն:

Կետ 10. 2020 թվականին ՀՀ Արմավիրի մարզում իրականացվել է «Տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց տնային պայմաններում խնամքի ծառայություններ» ծրագիրը, որի հիմնական նպատակն է խնամքի կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված՝ տարեց և/կամ հաշմանդամություն ունեցող 18 տարին լրացած անձանց տնային պայմաններում խնամքով ու սպասարկմամբ ապահովումը: Շահառուների թիվը 140-150 է, տատանվել է՝ կախված մահերից և նոր ներգրավվածներից, կարիքների գնահատման կարգը, ծառայությունների տեսակները, հաճախականությունը և նկարագիրը կարգավորվում են օրենքներով և կառավարության որոշումներով, որոնց մանրամասն կարող եք ծանոթանալ հետևյալ հղումով՝ http://www.mlsa.am/wp-content/uploads/2019/11/Hraver_-տնային-Արմավիր.doc

Կետ 19. 2017 թվականի սեպտեմբերի 7-10-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ անցկացվել է «Տարեցների հանրապետական խաղեր» մարզական միջոցառումը:

Միջոցառմանը մասնակցել է նաև Արմավիրի մարզի տարեցների 8 հոգանոց թիմը՝ շախմատ, շաշկի, դարթս, նարդի մրցաձևերում: Նարդու մրցաշարում Մխիթար Դանիելյանը գրավել է 2-րդ տեղը և ստացել դրամական պարգև:

Կազմակերպվել են տարեցների մեծարման երեկոներ: Մարզային մշակույթի տանը նշվել է Արմավիրի մարզի հասարակական գործիչ՝ ՀՀ գրողների միության անդամ Ռաֆայել Սահակյանի գրքի շնորհանդեսը՝ որը նվիրված էր ծնունդով արմավիրցի վաստակաշատ անձանց:

2018թ. ևս կազմակերպվել են տարեցների մեծարման երեկոներ, մասնավորապես մարզային մշակույթի տանը նշվել է Արմավիրի մարզի հասարակական գործիչ՝ ՀՀ գրողների միության անդամ՝ «Գրական Արմավիր» ստեղծագործական ակումբի ղեկավար՝ Արսեն Զաքարյանի «Ամենօրյա դողանջներ» գրքի շնորհանդեսը:

2018 թվականի սեպտեմբերի 8-10-ը Ծաղկաձորի գլխավոր մարզահամալիրում ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության նախաձեռնությամբ անցկացվել է «Տարեցների հանրապետական խաղեր» մարզական միջոցառումը:

Միջոցառմանը մասնակցել է նաև Արմավիրի մարզի տարեցների 8 հոգանոց թիմը՝ շախմատ, շաշկի, դարթս, նարդի մրցաձևերում: Նարդու մրցաշարում Լևոն Հայրապետյանը, իսկ Սամվել Հարությունյանը դարթսի մրցաշարում գրավել ն 2-րդ տեղը և ստացել դրամական պարգև:

Յուրաքանչյուր տարի մեծ շուքով է նշվում հոկտեմբերի 1-ը՝ տարեցների օրը: Այս կապակցությամբ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից տրամադրված 100 տարին անց 45 տարեցների անվանացանկը ուղարկվել է մարզի համապատասխան համայնքների ղեկավարներին, նրանց առաջարկելով իրենց համայնքներում կազմակերպել տոնական միջոցառումներ՝ մեծ վաստակ ունեցող տարեցների նկատմամբ հարգանքն ու ուշադրությունը հերթական անգամ ընդգծելու և նրանց ըստ արժանվույն մեծարելու համար:

Հոկտեմբերի 1-ին տարեցների միջազգային օրվա կապակցությամբ 2017-2020թթ. 100 և ավելի տարիքի 45 տարեցների դրամական օգնություն է տրամադրվել համայնքապետարանների կողմից:

Մարզպետարանը համագործակցել է Արմավիրի տարածաշրջանի <<Հայրենական Մեծ պատերազմի և աշխատանքի վետերանների խորհրդի>> հետ: Բոլոր քաղաքային և գյուղական համայնքներում մշակույթի տներում սենյակներ են տրամադրվել տարեցների ժամանցի համար: Դպրոցներում պարբերաբար կազմակերպել են հանդիպումներ Հայրենական Մեծ պատերազմի ու աշխատանքի վետերանների հետ/մայիսի 9-ին, մայիսի 28-ին՝ շքերթ, տոնական այլ միջոցառումներ/:

Մարզում գործող հասարակական կազմակերպությունների, հանրակրթական դպրոցների, բուժհիմնարկների նախաձեռնությամբ /նախկին տնօրեն, բժիշկ, ուսուցիչ/ կազմակերպվող մասնագիտական տոներին նվիրված միջոցառումներին մեծարվել են նաև տարեց մասնագետներ, ովքեր մեծ ներդրում են ունեցել այդ բնագավառում:

Կետ 20. Մարզի Արշալույս համայնքում խաչքարագործ-քանդակագործ Ռուբեն Նալբանդյանի նախաձեռնությամբ գործում է արվեստի դպրոց, որտեղ նա իր արվեստի հմտություններն է փոխանցում շուրջ 100 սաների:

Արմավիր քաղաքի Սուրբ Գրիգոր Նարեկացի եկեղեցու տարածքում գործում է փայտափորագրող Վիգեն Խաչատրյանի կողմից բացված խմբակը, որն ունի 30 սան:

Կետ 21. Տարեցները ընդգրկված են նաև մարզի պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններում, մասնակցում են համայնքային կյանքին և որոշումների կայացմանը: Մարզի 97 համայնքների 744 ավագանու անդամներից 86-ը տարեցներ են:

Տարեցների շրջանում 2020 թվականի ընթացքում միջոցառումներ չեն իրականացվել COVID-19 համավարակի հետ կապված սահմանափակումների պատճառով:

Հարգանքով՝

Հ. Մաթևոսյան

11.01.2021



VERIFIED OCSF 11.01.2021 17:54:26 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Կատ. Ա. Ապիտոնյան
Հեռ. 0237 2 04 69

